ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ				**0,0**	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝		**83376,3**	**83376,3**	**0,0**	
1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝		**83376,3**	**83376,3**	**0,0**	
1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0,0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		83 376,3	83 376,3	0,0	
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				**0,0**	
3. Այլ եկամուտներ, որից՝		**0,0**	**0,0**	**0,0**	
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0,0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0,0	

1	2	3	4	5=3-4	6
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		0,0	0,0	0,0	
- ծառայությունների մատուցումից				0,0	
- ապրանքների մատակարարումից կամ իրացումից				0,0	
- այլ եկամուտներ				0,0	
Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող Ա+տող Բ)	x	83376,3	83376,3	0,0	
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	x	83376,3	75143,0	8233,3	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	57000,0	53127,3	3872,7	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	x	57000,0	53127,3	3872,7	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	57 000,0	53 127,3	3872,7	Վճարվել է ըստ փաստացի հաստիքների
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112			0,0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	x	13152,0	8879,0	4273,0	
Դ2.1. Շարունակական ծախսեր		4730,3	2465,7	2264,6	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211			0,0	
-էներգետիկ ծառայություններ	4212	1 600,0	1898,5	(298,5)	Վճարվել է ըստ փաստացի կատարողականի
-Կոմունալ ծառայություններ	4213	2 220,3	65,1	2155,2	Ոռոգման ջուրը նախատեսված ժամանակից ուշ է մատակարարվել
-Կապի ծառայություններ	4214	410,0	391,1	18,9	
-Ապահովագրական ծախսեր	4215			0,0	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	500,0	111,0	389,0	
-Այլ ծախսեր	4217			0,0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	1500,0	866,0	634,0	
-Ներքին գործուղումներ	4221	1500,0	866,0	634,0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222			0,0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229			0,0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	x	0,0	0,0	0,0	
-Վարչական ծառայություններ	4231			0,0	
-Համակարգչային ծառայություններ	4232			0,0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233			0,0	
-Տեղակատվական ծառայություններ	4234			0,0	
-Կառավարչական ծառայություններ	4235			0,0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236			0,0	
-Ներկայացուցչական ծախսեր	4237			0,0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239			0,0	
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	0,0	0,0	0,0	
-Մասնագիտական ծառայություններ	4241			0,0	

1	2	3	4	5=3-4	6
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	**x**	**840,0**	**894,7**	**(54,7)**	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251			0,0	
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	840,0	894,7	(54,7)	
Դ2.6. Նյութեր	**x**	**6081,7**	**4652,6**	**1429,1**	
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	364,4	301,4	63,0	
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	364,0	363,9	0,1	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263			0,0	
-Տրանսպորտային նյութեր	4264	3860,0	2539,0	1321,0	Տրանսպորտային նյութերը նախատեսվում են ձեռք բերվել ամսական կտրվածքով և վճարվել է փաստացի ձեռք բերված չափաքանակ
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265			0,0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266			0,0	
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267			0,0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1493,3	1448,3	45,0	
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**x**	**13224,4**	**13136,7**	**87,6**	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին	**x**			**0,0**	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	**x**	**12724,4**	**12866,7**	**(142,4)**	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե այդ թվում		12724,4	12866,7	(142,4)	Վճարվել է ըստ փաստացի կատարողականի
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	***12724,4***	***12866,7***	***(142,4)***	
ԱԱՀ	x	12 724,4	12 866,7	(142,4)	
Շահութահարկ	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Այլ հարկեր (հարկային ճշգրտումներ)	x			0,0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	***0,0***	***0,0***	***0,0***	
Պետ տուրք				0,0	
Նշել ըստ տեսակների				0,0	
Նշել ըստ տեսակների				0,0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ		0,0	0,0	0,0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	***0,0***	***0,0***	***0,0***	
Գույքահարկ	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	***0,0***	***0,0***	***0,0***	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**x**	**0,0**	**0,0**	**0,0**	
-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831			0,0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**4861**	**500,0**	**270,0**	**230,0**	

1	2	3	4	5=3-4	6
«Էրեբունի» պետարգելոցում հակահրդեհային գոտու հանձնաժողով	x	500,0	270,0	230,0	
Չափագրում	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող9 -տող9)		0,0	8233,3	(8233,3)	
Զ. ՀՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		0,0	0,0	0,0	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	x	0,0	0,0	0,0	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0,0	0,0	0,0	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0,0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0,0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0,0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121			0,0	
-Վարչական սարքավորումներ	5122			0,0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0,0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0,0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0,0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0,0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0,0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	x	0,0	0,0	0,0	
-Հող	5411			0,0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0,0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0,0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0,0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	x			0,0	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	x	0,0	8233,3	(8233,3)	

Տնօրեն _____ Արա Հակոբյան
(անվանագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ Մարիետա Խաչատրյան
(անվանագրություն)

Ձև 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ

NN	Միջոցառման անվանումը	Գործողությունների համառոտ նկարագիրը	Կատարողական չափորոշիչները (քանակական, որակական, ժամկետային և այլ)	Ակնկալվող արդյունքները կամ գնահատման չափորոշիչները	Ծավալային ցուցանիշները			Պարզաբանումներ և բացատրություններ շեղումների վերաբերյալ*
					Չափման միավորը	Հաստատված աշխատանքային ծրագրով	Փաստացի իրականացված	
1	2	3	4	5	8	9	10	11
1	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի պահպանություն / պաշտպանություն	«ԱՊՀ» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող տարածքների պահպանություն (23598.7 հա)	քանակական, որակական, ժամկետային	Չխախտված էկոհամակարգ	Հա	23598.7	23598.7	
2	Հակահրդեհային միջոցառումներ «Էրեբունի» պետական արգելոցում	Միջոցառումն իրականացվելու է 2-րդ կամ 3-րդ եռամսյակում «Էրեբունի» պետական արգելոցում: Հանքայնացված շերտերը ստեղծվելու է հողի վարի միջոցով: Այն ընդգրկելու է շուրջ 2.5 հա տարածք ունենալով 4 կմ երկարություն	քանակական, որակական, ժամկետային	Հարակից տարածքներից հրդեհների ներթափանցման կանխում	Հա	2.5	2.5	
3	«Էրեբունի» պետական արգելոցում և հարակից տարածքներում տարածված հազվագյուտ, անհետացող և << Կարմիր գրքում գրանցված տեսակների գենոֆոնդի գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացում	Տարվա ընթացքում կազմակերպվելու են դաշտային ուսումնասիրություններ արգելոցի և հարակից տարածքներում դասական մեթոդներով՝ նպատակ ունենալով հետևել և հայտնաբերել տեղի ունեցող բնական երևույթները: Մոնիտորինգն կիրականացվի << կառավարության որոշումների համաձայն: կատարվել են հերբարիումի հավաքման միջոցառումներ, որոնք կմշակվեն լաբորատոր պայմաններում:	քանակական, որակական, ժամկետային	Տեղի ունեցող բնական երևույթների ազդեցությունների գրանցում և դրանց հետևանքների հայտնաբերում,տվյալների բազա, գիտական նյութեր, առաջարկություններ	հաշվետվություն	4.0	2.0	

	ենդրոպարկերում և «Զրվեժ» անտառպարկում բնական ու ներմուծված ծառաթփատեսակների բազմազանության, ֆաունայի և ֆլորայի հետազոտում, տեսակային կազմի՝տեղական և ներմուծված ծառաթփատեսակներին համալրման միջոցառումներ	Տարվա ընթացքում կազմակերպվել են դաշտային ուսումնասիրություններ անտառպարկում և դենդրոպարկերում դենդրոֆլորայի տաքսոնոմիական կազմի ուսումնասիրության և համալրման նպատակով: Կատարվ են հերբարիումի հավաքման միջոցառումներ, որոնք կմշակվեն լաբորատոր պայմաններում:	քանակական, որակական, ժամկետային	Լրամշակված ցուցակներ. ներմուծված նոր տեսակներ	հաշվետվություն	4.0	2.0	
5	«Որդան կարմիր» պետական արգելավայրի ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Տարվա ընթացքում կազմակերպվել են դաշտային ուսումնասիրություններ արգելավայրի ֆլորայի ուսումնասիրության և Որդան կարմիր միջատի հաշվառման ու մոնիտորինգի ուղղությամբ: Մոնիտորինգը իրականացվել է ՀՀ կառավարության որոշումների համաձայն: Հավաքված նյութը կմշակվի լաբորատոր պայմաններում	քանակական, որակական, ժամկետային	Լրամշակված ցուցակներ, Որդան կարմիր միջատի թարմացված մոնիտորինգային տվյալներ	հաշվետվություն	4.0	2.0	
6	«Ջերմուկի ջրաբանական» և «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրերի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում	Տարվա ընթացքում կազմակերպվել են դաշտային ուսումնասիրություններ՝ արգելավայրերի ֆլորայի և ֆաունայի նախնական ուսումնասիրությունների իրականացման նպատակով: Գույքագրման ցուցակների ստեղծման նպատակով հավաքված նյութը կմշակվի լաբորատոր պայմաններում	քանակական, որակական, ժամկետային	Գույքագրման ցուցակներ, գիտական նյութեր և հոդվածներ	հաշվետվություն	4.0	2.0	
7	Հակահրդեհային միջոցառումներ «Զիկատար» պետական արգելավայրում	Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց պետական արգելավայրի պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը: Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով	Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով (հողի վերին շերտի մաքրում	Համագործակցված պահպանության ապահովում և հրդեհի կանխում				
8	«Զիկատար» պետական արգելավայրի տարածքում հերթական ավերստուգիչ ստուգումների անցկացման՝ միջոցառումներ	Գարնանային (2-րդ, եռամսյակ) և աշնանային (4-րդ եռամսյակ) հերթական վերստուգիչ ստուգումների արդյունքների ամփոփում	Ապօրինի հատումների կանխարգելում, բացահայտում և հաշվետվությունների կազմում	Իրականացված ստուգումներ, ներկայացված ստուգման արձանագրություններ		2.0	1.0	

	«Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գիտական ուսումնասիրություններ	Սերմնային և կոճղաշիվային վերականգնման առանձնահատկությունների ուսումնասիրություններ հատված ծառուտներում:Էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուսումնասիրություններ	Հյուսիս-արևելյան Հայաստանի անտառներում սերմնային և կոճղաշիվային վերականգնման և էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուսումնասիրություններ	Առաջարկվող միջոցառումների արդյունքում անտառների վիճակի բարելավում,աճի և արտադրողականության բարձրացում				
10	«Զիկատար» պետական արգելավայրի տարածքում կենսաբազմազանության պահպանության, հարստացման և գործնական ուսուցումների կազմակերպման նպատակներով հիմնված տնկարանային տնտեսության դպրոց հողամասում տնկանյութի աճեցում և խնամք	Անտսոային, գեղազարդային և անտառային պտղատու ծառաթփատեսակների տնկիների աճեցում, համապատասխան մասնագետների և ուսանողների համար գործնական ուսուցումների կազմակերպում	Տնկարանի հողի նախացանքային մշակություն, սերմերի ցանքս և տնկիների խնամքի աշխատանքներ	Տնկարանի տարածքում սահմանված քանակի տնկանյութի առկայություն, խնամված և պահպանված տնկարան	Հա	1.0	1.0	

* Անհրաժեշտության դեպքում, եթե պարզաբանումը կամ բացատրությունը ծավալուն է, ապա կարող է այն ներկայացվել առանձին փաստաթղթով

Տնօրենի պարտականություններ
կատարող՝_____ Ա.Հակոբյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. 1-ին կիսամյակում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում կատարված աշխատանքների

2021թ.-ի 1-ին կիսամյակում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները:

«Էրեբունի» պետական արգելոց

• Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակում իրականացվել է պահպանություն խստացված ռեժիմով արգելոցի՝ 118.75 հա-ի վրա, որի ընթացքում ռեժիմի խախտման դեպք չի գրանցվել:

• Հակահրդեհային միջոցառման շրջանակներում իրականացվել են հանքայնացման աշխատանքներ 4 կմ երկարությամբ, առավել վտանգավոր սահմանային հատվածներում: Կուտակվել է ջրի պաշար:

«Որդան կարմիր» պետական արգելավայր

• Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակում արգելավայրում իրականացվել է պահպանության խստացված ռեժիմով աշխատանքներ 219.85 հա-ի վրա: Ջրառատի տեղամասում նախկինում հրդեհված տարածքում որդանախոտը մեր դիտարկումներով չի տուժել և սկսել է լավ աճել: Հավաքվել է մայրուղուց և հարակից բնակավայրերից քամու բերած կենցաղային աղբի մնացորդները և արգելավայրի սահմաններից դուրս բերվել: Գայլուկով տարածված օջախներում հեռացվել է գայլուկի բուսուտները:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանություն դենդրոպարկում 35 հա վրա: Ձյան տեղումներից հետո մաքրվել են ջերմատան

ապակյա շրջանակները, իսկ հողը չորանալու դեպքում ձյուն է ներկրվել և տարածվել տնկիների շուրջ, ձյան տեղումներից հետո թափ են տրվել արժեքավոր և մշտադալար ծառատեսակները ձյունից: Մաքրվել է ճանապարհները: Նախապատրաստվել և թարմացվել է 20 (քսան) նոր պիտակներ, որոնց վրա գրված է տեքստ 3 (երեք) լեզվով,վերջիններս սոսնձվում են լամինատի վրա երկու կողմից: Գարնանային մաքրման աշխատանքների ընթացքում՝ մաքրվել են ճանապարհները գարնանային թափուկից և դուրս է բերվել դենդրոպարկի տարածքից: Ջերմոցներում կատարվել է պարարտացման աշխատարքներ, վերանորոգվել է ջերմոցի ոռոգման ցանցը: Իրականացվել է տնկանյութի վաճառք, որը հանվել է հողագնդով:

Կատարվել է ծաղկանոցներում 6 տեսակ ծաղիկների (Ռուզբեկիա, Գայլառդիա, Տագետես, Գելեխրիզում, Ռամաշակա, Ստախիս) սածիլներով լրացում, քաղհան- փխրեցում, պարարտացում, քիմիական պայքարի աշխատանքների: Ճանապարհները եզրագծվել են , բուսազրկվել, ներկրված ավազով ավազապատվել: Գազոններըհինձվել են, իսկ առանձնյակ թփերը և ծառերը ձևավորվել, խուզվել են բորդյուրները, լրացվել չորացած հատվածները: Անտառպաթոլոգիական ուսումնասիրության արդյունքում կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ գիհիների և արևելյան եղևնիների մոտ հայտնաբերված վարակի օջախներում: Տնկարանում և ջերմատանը կատարվել է տնկանյութի խմբավորում, լրացում, մշակում, պարարտացում, ոչ բարենպաստ պայմաններում ձեռքով ոռոգում: Դենդրոպարկը տարեսկզբից ունեցել է 36848 այցելու և կատարել է 2,4 միլիոն դրամի տնկիների վաճառք: Դենդրոպարկում ամեն օր կատարվում է էկոդաստիարակչական աշխատանքներ: Տարածքը շուրջօրյա մաքրվում է:

Իջևանի «Դենդրոպարկ»

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանություն խստացված ռեժիմով դենդրոպարկի 5.7 հա վրա: Կատարվել են գարնանային մաքրման աշխատանքներ՝ տարածքը մաքրվել է թափուկից և դուրս է բերվել դենդրոպարկի տարածքից: Ձյան տեղումներից հետո մշտադալար ծառերը և թփերը թափ են տրվել: Կատարվել է 50 մ ^{2} հողի մշակման աշխատանքներ հավաքված սերմերը ցանելու համար: 2.5 հեկտարի վրա կատարվել է վերաճի և արմատային մացառների հեռացման աշխատանքներ: Շուրջ 100 տնկիների շուրջ կատարվել է բաժակափոր և փխրեցում: Աղստև գետի վարարման հետևանքով, շուրջ 2 հեկտարի վրա մաքրվել է տարածքը, ջրի բերած թափուկից: Հանվել է 3000 հատ տոսախի տնկիներ և տեղափոխվել «Ջրվեժ» անտառպարկ: Ցանված սերմերի դաշտում կատարվել է ճյուղերով ստվերացում և ոռոգում դույլերով: Սերմնադաշտում կատարվել է քաղհան ոռոգում ձեռքով: ցանկապատի վերանորոգում, ապօրինի արածեցումը կանխելու համար: Հակահրդեհային միջոցառումների շրջանակներում խոտաբույսերի հինձում և հեռացում:

Բերդի «Սորաններ»դենդրոպարկ

Բերդի «Սորաններ» դենդրոպարկում պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանություն խստացված ռեժիմով դենդրոպարկի 62.17 հա վրա: Ձյան տեղումներից հետ ձյունից մաքրվել են արժեքավոր ծառատեսակները և թափ են տրվել: Իրականացվել է տարածքի մաքրման աշխատանքներ՝

հավաքվել է տաարածքից գարնանային թափուկը և դուրս է բերվել: Կատարվել է լրացում տնկվել է 40 հատ թույայի , 120 հատ տոսախի, 22 հատ յասամանի, 26 հատ վարդի, 18 հատ արմավաշուշանի, 105 հատ հացենու, 3 հատ ուռենու, 16 հատ դափնեկեռասի և 90 հատ վարդու տնկիներ: Կտրվել, մշակվել, տնկվել է 750 հատ թույայի և 109 հատ վարդենու, 100 հատ բարդու և 50 հատ ուռենու կտրոններ: Վերանորոգվել է դենդրոպարկի 4,5 կմ երկարությամբ կենտրոնական ջրագիծը, փոխվել է 10 գծմ երկարությամբ խողովակ և ոռոգման ջուրը հասցվել է դենդրոպարկի կենտրոնական հատված: Տնկարանում կատարվել է 2 անգամ մաքրման, քաղհան-փխրեցման աշխատանքներ: Կտրվել են չորաաած ճյուղերը , հեռացվել է վերաճը: Հակահրդեհային միջոցառումների շրջանակներում հնձվել է վտանգավոր հատվածների խոտաբույսերը՝ շուրջ 7 հա տարածքի վրա:

Վանաձորի «Սարուխանայն ժ-ի անվան» դենդրոպարկ

Դենդրոպարկում վարձակալի կողմից կատարվել են մաքրման, չորացած ճյուղերի էտման և թափոնի դուրս բերման աշխատանքներ: Ծաղկանոցներում և կանաչ ցանկապատերի շրջակայքում իրականացվել է հողի մշակման, բույսերի ձևավորման աշխատանքներ: Երիտասարդ եղևնիների շուրջ կատարվել է բաժակափոր: Լրացման աշխատաքների իրականացման շրջանակներում տնկվել են կեչիներ: Ջրավազանները մաքրվել և ձևավորվել նոր քանդակներով: Կառուցվել է նոր ժամանակակից պետքարան:

«Ջրվեժ» անտառպարկ

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանության աշխատանքներ խստացված ռեժիմով անտառպարկի՝ 423.8 հա-ի վրա, որի ընթացքում կանխվել է ապօրինի արածեցման 11 (տասնմեկ) դեպք:

Ձյան տեղուներից հետո թափ են տրվել մշտադալար ծառերը և մաքրվել ճանապարհները:

Անտառմշակույթների միանվագ խնամք միջոցառման շրջանակում էտվել են շուրջ 150 ճանապարհամերձ ծառերի չորացած ճյուղերը: Գարնանային թափուկից մաքրվել է կենտրոնական ճանապարհը: Կատարվել է անտառմշակույթների լրացման աշխատանքներ հանվել է հողագնդով 155 հատ սոճու , 350 հատ գիհու , 140 հատ հացենու, 800 ճապկու, 60 տոսախի և բալենու տնկիներ և տնկվել: Հավաքվել է սոսի արևելյան տեսակի սերմեր և ցանվել: Կտրվել են շուրջ 1000 ծառերի չորացած ճյուղերը, ինչպես նաև երիտասարդացնող էտ է իրականցվել: Կրապատվել պտղատու ծառերի բները: Շաբաթօրյակի շրջանակում տնկվել է 1000 տնկիներ՝ տանձենի, խնձորենի և հացենի: Անտառպաթոլիգիական ուսումնասիրության արդյունքներով, գիհիների մոտ հայտնավերված բակտերիոզ, սոճիների կեղևակերերի, պտղատուների մոտ տերևակերների, մոնիլոզի, ծակոտկեն բնավորության և մյուս վարակի օջախներում, շուրջ 15 հա տարածքի վրա կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ: Նախկինում հատված ծառերի կոճղերի մեջ հայտնաբերված կեղևակերների թրթուրների կոճղերում պահպանված օջախները շուրջ 200 կոճղերը ճեղքվել են և մշակվել թունաքիմիկատով: Հակահրդեհային միջոցառումների շրջանակում կատարվել է խոտաբույսերի հնձում , հավաքում

և տարածքից դուրս բերում, շուրջ 10 հա տարածք վրա: Տնկարանում մաքրվել է , հողը փորվել և տնկվել է Իջևանի դենդրոպարկից բերված 1840 հատ տոսախ, և կտրված և մշակված 1000 հատ տոսախ և գիհի: Վերանորոգվել է ոռոգման ցանցի վթարված հատվածները և կատարվել է ոռոգում շուրջ 90 հա տարածքի վրա: Անտառպարկը ունեցել է շուրջ 9647 այցելու:

«Զիկատար» պետական արգելավայր

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակում իրականացվել է պահպանության աշխատանքներ, 150հա տարածքի վրա, որի ընթացքում ռեժիմի խախտման դեպքեր չեն գրանցվել: Կատարվել է էկոտուրիստական ենթակառուծվածքների բարելավման աշխատանքներ: Վերանորոգվել են արգելավայրի ցանկապատի և ջրագծի վնասված հատվածները: Իրականացվել է արգելավայրի ցանկապատի և ջրագծի վնասված հատվածների վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ: Շարունակվել է էկոտուրիստական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Կենսաբազմազանության պահպանության, հարստացման և գործնական ուսուցումների կազմակերպման նպատակներով հիմնված տնկարանային տնտեսության տարածքում իրականացվել են տնկանյութի աճեցման, խնամքի քաղհանի փխրեցման և ոռոգման աշխատանքներ: Իրականացվել է ծառատունկ՝ տնկվել է անտառային, գեղազարդային և պտղատու ծառատեսակների տնկիների խնամել և ոռոգվել: «Զիկատար» պետական արգելավայրի առավել հրդեհավտանգ տարածքներում իրականացվել է հակահրդեհային միջոցառումներ: Ապահովվել է արհեստական լճակների ջրի պաշարի առավելագույն քանակություն: Իրականացված աշխատանքների շնորհիվ տարածքը դարձել է ոչ հրդեհավտանգ: Հաշվետու շրջանում հրդեհի դեպքեր չեն արձանագրվել: Հարակից համայնքների բնակչության շրջանում իրականացվել է էկոլոգիական իրազեկության բարձրացման աշխատանքներ: Գիտական ուսումնասիրությունների շրջանակներում շարունակվել է էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուսումնասիրությունները: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արգելավայրի տարածքում իրականացված ստուգման արդյունքներով ծառահատման, բնական վերաճի ոչնչացման և անտառխախտման դեպքեր չեն արձանագրվել: Իրականացված միջոցառումների շնորհիվ ապահովվել է պետական արգելավայրի կայուն կառավարումը:

Կազմակերպության գիտության բաժնի կողմից կատարվել են հետևյալ գիտական աշխատանքները

2021թ.-ի 1-ին կիսամյակում Կազմակերպության գիտության բաժնի կողմից շարունակվում են գիտական աշխատանքները: Գիտության բաժինը տարիներ շարունակ համագործակցում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի՝ ագրոնոմիական ֆակուլտետի 19 ուսանողները իրենց արտադրական պրակտիկան անց են կացրել «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Ջրվեժ» անտառպարկում:

Շարունակվում են համագործակցությունները կրթահամալիրների հետ: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում գտնվող «Ջրվեժ» անտառպարկում 6 ամիսների ընթացքում էկոկրթական, էկոճանաչողական շրջայցեր են կատարել «Արեգնազան», «Մխիթար սեբաստացի» և «Դեղին արտույտ» կրթահամալիրների սաները:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում գտնվող «Ջրվեժ» անտառպարկ են այցելել 9647 այցելու, հիմնականում ձմեռային հանգիստը կազմակերպելու համար:

«Էրեբունի» պետական արգելոց

Արգելոցում և հարակից տարածքներում տարածված հազվագյուտ և անհետացող, ՀՀ Կարմիր գրքում գրանցված 15 տեսակների աճելավայրերը ճշտվել են արգելոցի քարտեզի վար հետագայում մոնիթորինգ իրականացնելու համար: Շարունակվում են արգելոցի տարածքից հավաքված գիտական նյութերի ուսումնասիրման աշխատանքները: Հավաքվել է գիտական գրականություն, որը օգտագործվում է հավաքված նյութերի ճշտման աշխատանքներում: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժինը իրականացրեց մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ «Էրեբունի» պետական արգելոցում և հարակից տարածքներում տարածված հազվագյուտ, անհետացող և ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված տեսակների վրա:

«Էրեբունի» պետական արգելոցը իրենից ներկայացնելով չոր լեռնատափաստանային և կիսաանապատային գոտիների ֆլորաների ու բուսականության առանձնահատկություններով օժտված տարածք,որտեղ բարձրակարգ ծաղկավոր բույսերի ֆլորան ներկայացված է շուրջ 300 տեսակներով,իսկ հազվադեպ ,անհետացող և «Կարմիր գրքում» գրանցված են 15 տեսակ:

Հիմնական պահպանվող տեսակները վայրի ցորեններն են՝ Ց.արարատյան, Ց.բեռտական,Ց.ուրարտական, իրենց վայրի ազգակիցներով և ներտեսակային մեծ բազմազանությամբ, որոնց դաշտային ուսումնասիրության համար հիմնված 1մ^2 փորձահրապարակներում կատարվում են ամենամյա դիտարկումներ:

Վայրի ցորենների զանգվածային աճելավայրերը խախտված, չճմակալված հանդակներնում են, իսկկ ճմակալված, չխախտված տարածքներում ցորենները հանդիպում են հատ ու կենտ:

Արգելոցի ողջ տարածքում Ց.արարտայանը,Ց. բեոտականը հանդիպում են գրեթե ամենուր, զանգվածային վերաճի ճնշվածութը ուն չի նկատվում,սակայն այս տարի համամատաբար ցածրաճ են: Ց. ուրարտական տեսակը ունի սահմանափակ տարածվածություն,հանդիպում է փոքր խմբերով:

Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ արգելոցի տարածքում աճող հազվագյուտ, անհետացող և ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված տեսակները բացի ցորեններից պահպանում են, իրենց թվաքանակը, ճնշվածությաուն չունեն սակայն արգելոցի տարածքից դուրս կատարվող անվերահսկելի խոշորամասշտաբ բույսերի հավաքը հավաքը, շատ բացասական է անդրադառնում բուսական ռեսուրսների վերարտադրության վրա և նկատվում է տեսակների թվաքանակի կրճատում: Նկատելի էր հատկապես վարդատերեփուկ մուշկային (Amberboa moschata), հիրիկ նրբագեղ (Iris elegantissima) տեսկների մոտ թվաքանակի կտրուկ նվազում: Տերեփուկ երևանյան (Centaurea erivanensis), ակտինոլեմ խոշորաբաժակ (Actinolema macrolema), ճարճատուկ գեղձավոր (Cichorium glandulosum), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzianii), գազ խառն (Astragalus commixtus), շարդինիա խոշորապտուղ (Chardinia macrocarpa) տեսակների մոտ էական փոփոխություններ նկատելի չէր:

Հավաքվեց 24 թերթ հերբարիում, թարմացնելու հերբարիումները և կատարելու ֆլորայում հնարավոր փոփոխությունների ուսումնասիրություններ:

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր

Արգելավայրի ֆլորայի և ֆանուայի ուսումնասիրության միջոցառման շրջանակներում իրականացվում են հաքված նյութերի ուսումնասիրություն: Արգելավայրում 2020թ-ին նախանշված և մշակված երկու երթուղիներով շարունակվելու է ֆլորայի և ֆաունայի դաշտային ուսումնասիրությունները, որի ընթացքում նախատեսվում է կատարել նյութերի հավաք և ցուցակների ճշգրտում, ելնելով մասնագիտական գրականության տվյալների օգտագործումից: <<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրում՝ Մարմարիկ գետի վերին հոսանքի ջրահավաք ավազանում լավ արտահայտված են լեռնային տափաստանները, լեռնային անտառների, մերձալպյան և ալպյան գոտիները:

Մարմարիկի հովտում լեռնատափաստանային լանդշաֆտները լավ արտահայտված են ձախափնյա լանջերում, աջափնյա լանջերը անտառածածկ են:

Անտառային գոտին ձգվում է մինչև 2000-2100 մետր բարձրության վրա, իսկ սուբալպյանը 2000-2700 մետր բարձրության:

Արգելավայրի տարածքի բուսականությունը ներկայացված է անտառային համակեցություններով (անտառի վերին սահմանում), որտեղ գերակշռում են կաղնի արևելյանը , Լիտվինովի կեչին, ելունդավոր կեչին, սովորական արուսենին, գերիմաստը, լայնատերև իլենին և այլն: Գրանցվեց նաև մրտավարդ կովկասյանի բուսուտներ:

Մերձալպյան մարգագետիններում գերակշռում են հիմնականում հացազգիները և հացազգի-բազմախոտ ֆորմացիաները , որտեղ գերակշռող տեսակներ են մանուշակագույն գարին , տարբեր շյուղախոտեր , ալպիական դաշտավլուկը:

Սուբալպյան և ալպյան գոտուց հավաքվեց 34 տեսակներ և պատրաստվեց հերբարիում:

Մոնիթորինգի կատարման ընթացքում արգելավայրի ջրահավաք ավազանում մակերեսային ջրային աղբյուրները չորացել էին և բուսականությունը սկսել էր չորանալ:

Ճշգրտվել են արգելավայրում աճող ծառաթփատեսակների տեսակային կազմը, որը ներկայացված է աղյուսակ 1ում:

Աղյուսակ 1.

N h/h	**Ծառաթփատեսակները ըստ ընտանիքների (լատիներեն-հայերեն)**	Կենսաձև
Angiospermae-Ծածկասերմեր		
Berberidaceae-Կծոխուրազգիներ		
1	Berberis orientalis Schneid.-կծոխուր արևելյան կամ ծորենենի արևելյան	ՏԹ
Betulaceae-Կեչազգիներ		
2	Betula litwinowii A. Doluch.- Կեչի լիտվինովի	ՏԾ
3	Betula pubescens Ehrh.- Կեչի թավոտ	ՏԾ
4	Betula pendula Roth.- Կեչի կախվող (լացող)	ՏԾ
5	Carpinus betulus L.- Բոխի սովորական	ՏԾ
Fagaceae-Հաճարազգի		
6	Quercus macranthera Fisch.et.C.A.Mey.ex Hohen-Կաղնի արևելյան կամ խոշորառէջ	ՏԾ
Oleaceae-Ձիթենազգի		
7	Fraximus exscelsior L.- Հացենի սովորական	ՏԾ
Rosaceae- Վարդազգիներ		
8	Cerasus mahaleb (L.) Mill. - Բալենի մահալեբյան	ՏԹ

9	Malus orientalis Uglitzk.- Խնձորենի արևելյան	ՏԾ
10	Pyrus communis ssp. caucasica (Fed.) Browicz - Տանձենի անտառային կամ կովկասյան	ՏԾ
11	Rosa canina L.(glaucous dog rose) - Մասրենի սովորական	ՏԹ
12	Rosa sosnovskyana- մասրենի սոսնովսկու	ՏԹ
13	Rosa spinosissima L.-մասրենի առատափուշ	ՏԹ
14	Rubus idaeus L.-մոռենի սովորական	ՏԹ
15	Crataegus caucasica K.Koch.- Սզնի կովկասյան	ՏԹ
16	Sorbus aucuparia L.- Արոսենի սովորական	ՏԹ
17	Sorbus kuznetzovii Zinserl.- Արոսենի կուզնեցովի	ՏԹ
18	Spiraea hypericifolia L.- Ասպիրակ սրոհունդատերև	ՏԹ
Salicaceae - Ուռենազգիներ		
19	Salix alba L.- Ուռենի սպիտակ	ՏԾ
20	Salix caprea L.- Այծուռի	ՏԾ

Ծանոթագրություն
ՏԾ-տերևաթափ ծառ
ՏԹ-տերևաթափ թուփ

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր

Նախապես մշակված երթուղիով «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրում կիրականացվի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրություններ: Կատարվել են գիտական և հրատարակված գրականության ուսումնասիրություններ իմի են բերվել տվյալները, որոնք օգտագործվելու են դաշտային ուսումնասիրությունների ժամանակ: <<Ջերմուկի ջրաբանական>> պետական արգելավայրի տարածքը պատկանում է Հայաստանի Դարալագյազի ֆլորիստիկ շրջանին: Արգելավայրի բուսականության հիմնական տիպը սուբալպիական մարգագետիններ և բարցրախոտեր են, որոնք արոտավայրեր և խոտհարքեր են:

Արգելավայրի ֆլորան ներկայացված է 330 անոթավոր բույսերի տեսակներով:

Անտառային վերին սահմանում նոսր անտառներ են, որտեղ գերակշռողը խոշորառէջ կաղնին է:

Տափաստանային բուսականությունը տարածված է միջին լեռնային գոտում և ներկայացվում է մեծ բազմազանությամբ՝ հանդիպում են շյուղախոտի, փետրախոտի գերակշռությամբ: Հանդիպում են տրագականտային տափաստանների բազմաթիվ տարատեսակները, իսկ խոնավ մասերում բարձրախոտերն են: Խիստ քարքարոտ վայրերում հանդիպում են պետրոֆիլային էկոհամակարգեր:

Առանձնապես մեծ տարածքներ են զբաղեցնում ուրցերը, որը բնակչության կողմից հավաքվում է մեծաքանակ չափերով:

- **«Որդան կարմիր» պետական արգելավայր**

Արգելավայրում ֆլորայի ուսումնասիրության և Որդան կարմիր միջատի մոնիթորինգ և հաշվառում միջոցառման շրջանակներում իրականացվում է 2020թ-ից հավաքված նյութերի ուսումնասիրություն: Կազմվել է կարմիր գրքում գրանցված տեսակների ցուցակը, մոնիթորինգ իրականացնելու համար: Ջրառատի տեղամասի 21.52հա տարածքում կատարած ֆլորայի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ֆլորայում փոփոխություններ չկան: 2019թ. սահմանային հատվածում ներթափանցած հրդեհված տարածքում որդանախոտը վնաս չէր կրել, աճում էր ավելի փարթամ, որովհետև ուղտափուշը լրիվ ոչնչացել էր՝ այդ տարածքում ավելի նկատելի և բաց էր որդանախոտը: Որդանախոտը ծաղկման փուլում էր:

Արազափի տեղամասում որոշ բուսատեսակներ շնորհիվ բազմացման և մրցակցային մեծ հնարավորության, առաջացրել են ինքնուրույն մոնոդոմինանտ համակեցություններ: Դրությունը որդանախոտի համար առավել վտանգավոր էր այն օջախներում, որտեղ տարածված էր գաղձը (Cuscuta ceratiana): Անհրաժեշտ էր այդ օջախներում կատարել այդ բուսատեսակի հեռացումը՝ մեխանիկական ճանապարհով: Որդան կարմիր միջատի կերաբույս հանդիսացող որդանախոտի և եղեգի սերմնային բազմացումը դժվարությունների հետ է կապված:

Այդ ուղղությամբ կատարվում են աշխատանքներ՝ սերմերի հասունացման փուլում կատարե՛լ հավաք և ցանքս: Կատարվում են ուսումնասիրություններ վեգետատիվ բազմացման ուղղությամբ:

«Զիկատար» պետական արգելավայր

- «Զիկատար» պետական արգելավայրի աշխատակիցները Կողբ գյուղի գեղարվեստի դպրոցում կազմակերպել են անտառի միջազգային օրվա կապակցությամբ բնապահպանական ֆիլմի ցուցադրում և քննարկումներ: Կատարվել են ուսումնասիրություններ և ճշտվել են տարածքները, որտեղ պետք է կատարվեն սերմնային և կոճղաշիվայի վերականգնման աշխատանքներ:

Դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում ֆլորայի և ֆաունայի հետազոտում, բնական և ներմուծված ծառաթփատեսակների, տեսակային կազմի՝ տեղական և ներմուծված ծառաթփատեսակների համալրման միջոցառումների շրջանակներում իրականացված աշխատանքների մասով՝ կատարվել է «Ջրվեժ» անտառպարկում ավելի չորադիմացկուն գեղազարդիչ տեսակների ուսումնասիրություն և դրանց բազմացման հնարավորությունները: Հետագայում լրացման աշխատանքները այդ տեսակներով կատարելու համար: Որի համար

սկսվել են բազմացման աշխատանքների կատարումը՝ կտրվել են թույա արևելյան, գիհի կազակական, գիհի երկարատերև, թույա արևմտյան ձև Ռոզենտալի տեսակների շուրջ 1000 կտրոններ և դրվել են արմատակալեցման: Տեսակային կազմի ցուցակների ճշտգրտման համար հավաքվել է 54 տեսակներ և ստեղծվել հերբարիումներ: Աշխատանքները շարունակվելու են բաց գրունտում՝ տնկարանում:

Բոլոր դենդրոպարկերում իրականացվում են նախորդ տարվա կատարված գիտական ուսումնասիրությունների արդյունքում ստացված տեսակային կազմի ցուցակների թարմացում:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում կատարվել է նոր տեսակների՝ կվենի ամերիկական, թուոպսիս ճապոնական, ծառապիոն, հորտենզիա խոշորատերև տեսակների ներմուծման և բազմացման աշխատանքներ:

Իջևանի դենդրոպարկ են ներմուծվել 15 գեղազարդիչ տեսակների նոր պարտիզային ձևեր:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է հավաքված կենդանաբանական նյութերի մշակում լաբորատոր պայմաններում՝ գույքագրման ցուցակների լրացման համար:

Կազմակերպության ենթակայության տակ գտնվող դենդրոպարկերի ֆաունայի ցուցակներում ճշտվել է կարմիր գրքում գրանցված տեսակները, հետագայում մոնիթորինգ իրականացնելու համար

«Որդան կարմիր» արգելավայր Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae 1. Hedyphanes coeruleus 2. Centorus filiformis 3. *Adelphinus ordubadensis- Օրդուբադյան սևամարմին Ընտանիք Տերևակերներ – Chrysomelidae 4. Smaragdina Bipunctata	«Էրեբունի» արգելոց Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae 1. Entomogonus clavimanus «Ջերմուկի ջրաբանական» արգելավայր Ընտանիք Գնայուկբզեզներ – Carabidae 1. Carabus renardi 2. Harpalus serripes

«Հանքավանի ջրաբանական» արգելավայր

Ընտանիք Գնայուկ բզեզներ – Carabidae

1. Bembidion Ellipticocurtum
2. Harpalus serripes
3. Amara cursitans
4. Zabrus trinii

Ընտանիք Hysteridae

5. Hister quadrimaculatus L.
6. Margarinotuscadaverinus

Ընտանիք Դիակերներ – Silphidae

7. Nicrophorus Vespilloides
8. Silpha Obscura

Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae

9. Anisoplia Signata
10. Onthophagus Grosse Punctatus
11. Homalopliaspirea
12. Protaetia cuprea

Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae

13. *Cylindronotus erivanus- Երևանյան սևամարմին
14. Cylindronotus Femoratus
3. Lebia Cyanocephala
4. Elaphropus diabrachys
5. Agonum viridicupreum

Ընտանիք Սևամարմիններ – Staphylinidae

6. Olophrumassimile
7. Astilbus Caucasicus

Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae

8. Aphodius Obscurus
9. Onthophagus Sericatus
10. Onthophagus amyntas
11. Oxythyrea Cinctella

Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae

12. Cylindronotus Femoratus
13. Crypticusquis quilius
14. Opatrumgeminatum
15. Pedinus Femoralis

Ընտանիք Տերևակերներ – Chrysomelidae

16. Phaedon cochleariae
17. Orsodacne cerasi

Ընտանիք Թարախահաններ – Meloidae

18. Mylabris variabilis
19. Meloe mediterraneus

15. *Armenohelops armeniacus- Հայկական սևամարմին 16. Ectromopsisditeras 17. Opatrum sabulosum Ընտանիք Փղիկներ – Curculionidae 18. Rhinocyllus conicus 19. Larinusturbatus 20. Cionushortulanus Ընտանիք Տերևակերներ – Chrysomelidae 21. Cryptocephalus moraei 22. Cryptocephalus sericeus 23. Chrysolina herbacea E 24. Galeruca pomonae	Ընտանիք Ոսկեբզեզներ – Buprestidae 20. Sphenoptera sp. n. 21. Coraebus elatus Ընտանիք Երկարաբեղիկներ – Cerambycidae 22. *Dorcadion bistriatum- Երկգիծ երկարաբեղիկ Ընտանիք Զատիկներ – Cocinellidae 23. Adalia bimaculata Ընտանիք Փղիկներ – Curculionidae 24. Cleonus tigrinus 25. Cleonus piger 26. Ceuthorrhynchus turbinatus 27. Baris despicata

*տեսակը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում

Տնօրենի պարտականությունները

կատարող՝ Ս.Հակոբյան

Կատ.Ա.Հարությունյան

Մ.Խաչատրյան